ՀՖՖ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2023թ. խմբագրություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ 6

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 8

Հոդված 1. Կարգավորվող հարաբերությունները 8

Հոդված 2. Գաղտնիություն և անկախություն 8

Հոդված 3. ԶԼՄ-ների հետ հանդիպումներ 9

ԳԼՈՒԽ 2. ՄՇՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ՆԻՍՏԵՐԸ 10

Հոդված 4. Մշտական կոմիտեների գործունեության նպատակը և կարգավիճակը 10

Հոդված 5. Մշտական կոմիտեների կազմը և անդամները 10

Հոդված 6. Մշտական կոմիտեների անդամների նշանակման կարգը, պաշտոնավարման ժամկետը, իրենց գործունեությունը կարգավորող նորմատիվ և իրավական բազան: 10

Հոդված 7. Մշտական կոմիտեների աշխատանքների կազմակերպման կարգը, նիստերի գումարման պարբերականությունը, նիստերի վերաբերյալ անդամներին ծանուցումը, օրակարգի ներկայացումը 11

Հոդված 8. Մշտական կոմիտեների աշխատանքների ծրագիրը 11

Հոդված 9. Մշտական կոմիտեների գործունեության ոլորտը սպասարկող ՀՖՖ ստորաբաժանումները 12

Հոդված 10. Մշտական կոմիտեների գործունեության մեջ ՀՖՖ Գլխավոր քարտուղարի, տվյալ կոմիտեի ոլորտը սպասարկող ՀՖՖ ստորաբաժանման և ՀՖՖ Իրավաբանական և ՄՌ բաժնի դերը 12

Հոդված 11. Մշտական կոմիտեների գործունեության մեջ կոմիտեների նախագահների դերը 13

Հոդված 12. Մշտական կոմիտեների նիստերի նախագահողը 13

Հոդված 13. Մշտական կոմիտեների նիստերի օրակարգը 14

Հոդված 14. Մշտական կոմիտեների անդամների ձայնի իրավունքը, քվորումը և քվեարկության կարգը 14

Հոդված 15. Մշտական կոմիտեների նիստի արձանագրությունները 15

Հոդված 16. Մշտական կոմիտեների կողմից աշխատանքային խմբերի ձևավորումը 16

ԳԼՈՒԽ 3. ՄՇՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԿԱԶՄԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ 17

Հոդված 17. ՀՖՖ-ի կառուցվածքային ստորաբաժանումներ հանդիսացող մշտական կոմիտեներն են. 17

Հոդված 18. Ֆինանսական կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները 17

Հոդված 19. Ֆինանսական կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները....18
Հոդված 20. ՀՖՖ-ի առաջնությունների կազմակերպչական կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները....18
Հոդված 21. ՀՖՖ-ի Առաջնությունների կազմակերպչական կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները....19
Հոդված 22. Տեխնիկական և զարգացման կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները....19
Հոդված 23. Տեխնիկական և զարգացման կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները....20
Հոդված 24. Մրցավարական կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները....20
Հոդված 25. Մրցավարական կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները....22
Հոդված 26. Կանանց ֆուտբոլի և ֆուտզալի կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները....22
Հոդված 27. Կանանց ֆուտբոլի և ֆուտզալի կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները....23
Հոդված 28. Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները....23
Հոդված 29. Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները....24
Հոդված 30. Մասսայական ֆուտբոլի կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները....24
Հոդված 31. Մասսայական ֆուտբոլի կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները....24
Հոդված 32. Շահառուների կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները....25
Հոդված 33. Շահառուների կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները....25
Հոդված 34. Բժշկական կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները....25
Հոդված 35. Բժշկական կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները....26
ԳԼՈՒԽ 4. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿՈՄԻՏԵՆԵՐ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ՆԻՍՏԵՐԸ....26
Հոդված 36. Ժամանակավոր կոմիտեների գործունեության նպատակը և կարգավիճակը

Հոդված 37. Ժամանակավոր կոմիտեների կազմը և անդամները....27
Հոդված 38. Ժամանակավոր կոմիտեների ստեղծման և գործունեության իրավական կարգավորումը....27
ԳԼՈՒԽ 5. ԱՆԿԱԽ ԿՈՄԻՏԵՆԵՐ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ....28
ԳԼՈՒԽ 5.1. ԱՈՒԴԻՏԻ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ....29
Հոդված 39. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի գործունեության նպատակը և կարգավիճակը....29
Հոդված 40. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի կազմը և անդամները, իրենց գործունեությունը կարգավորող նորմատիվ և իրավական բազան....29
Հոդված 41. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի աշխատանքների ծրագիրը 30
Հոդված 42. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի աշխատանքների կազմակերպման կարգը, նիստերի գումարման պարբերականությունը, նիստերի վերաբերյալ անդամներին ծանուցումը, օրակարգի ներկայացումը....30
Հոդված 43. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի գործունեության մեջ ՀՖՖ Իրավաբանական և ՄՌ բաժնի դերը....31
Հոդված 44. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի գործունեության մեջ կոմիտեի նախագահի դերը....31
Հոդված 45. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նիստերի նախագահողը .31
Հոդված 46. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նիստերի օրակարգը....32
Հոդված 47. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի անդամների ձայնի իրավունքը, քվորումը և քվեարկության կարգը....32
Հոդված 48. Աուդիտի և համապատասխանության կոմիտերի նիստի արձանագրությունները....33
Հոդված 49. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի կողմից աշխատանքային խմբերի ձևավորումը....34
ԳԼՈՒԽ 5.2. ԸՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ....34
Հոդված 50. Ընտրական կոմիտե....34
ԳԼՈՒԽ 6. ԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ....35
Հոդված 51. Ընդհանուր դրույթներ....35
ԳԼՈՒԽ 7. ՀՖՖ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ, ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ....36
Հոդված 52. Մշտական, ժամանակավոր և անկախ կոմիտեների անդամների իրավունքների և պարտականությունների իրավական կարգավորումը....36
Հոդված 53. Մշտական, ժամանակավոր և անկախ կոմիտեների անդամների գործունեության հիմնական սկզբունքները....36

Հոդված 54. Մշտական, ժամանակավոր և անկախ կոմիտեների անդամների և ՀՖՖ-ի հիմնական կազմակերպչական, կարգապահության և էթիկայի հետ կապված պարտականությունները....36

ԳԼՈՒԽ 8. ՀՖՖ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ ԵՎ ՆԿԿ-ՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՀԱՆՋՆԵՐԻ, ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ....40

Հոդված 55. ՀՖՖ կոմիտեների անդամների սույն կանոնակարգով և ՆԿԿ-ով նախատեսված պարտավորությունների, պահանջների, կարգապահության և էթիկայի կանոնների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունը....40

ԳԼՈՒԽ 9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ....41

Հոդված 56. Այն հարցերի կարգավորումը, որոնք կարգավորված չեն Կանոնակարգով 41

Հոդված 57. Սույն կանոնակարգի ընդունումը և ուժի մեջ մտնելը....41

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

ՀՖՖ	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
ՖԻՖԱ	Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիա
ՈՒԵՖԱ	Ֆուտբոլի եվրոպական ասոցիացիաների միություն
ԻՖԱԲ	Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային խորհուրդ
Առաջնություն	ՀՖՖ Հովանու ներքո անցկացվող սիրողական և պրոֆեսիոնալ մակարդակի բոլոր մրցումները
Ակումբ	մարզական առումով ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կանոնակարգերին և սահմանված կիրառելի և վերաբերելի նորմերին ենթարկվող ֆուտբոլային մարզական ակումբ (թիմ), որը մասնակցում է կամ ցանկանում է մասնակցել ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող ֆուտբոլային մրցումներին
Արտակարգ իրավիճակ/ Ֆորս-մաժոր	Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են հանդիպման մասնակցի և կազմակեպչի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), համաճարակները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, գործադուլները, որոնք խոչընդոտում են ֆուտբոլային հանդիպման՝ պատշաճ և ըստ

	նախատեսվածի կազմակերպմանը և/կամ անցկացման
ՀՖՖ Ժողով կամ Ժողով	ՀՖՖ-ի բարձրագույն և իրավաստեղծ մարմին:
Գործադիր կոմիտե	ՀՖՖ-ի կառավարման մարմին
Խաղի կանոններ	ՖԻՖԱ-ի կանոնադրության համաձայն ԻՖԱԲ-ի կողմից հրապարակված Ասոցիացիոն ֆուտբոլի կանոններ:
ՆԿԿ	ՀՖՖ Ներքին կազմակերպական կանոնակարգ
ԿԱՍ	Սպորտային արբիտրաժային դատարան, Լոզան, Շվեյցարիա

Ծանոթագրություն. *Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնակարգում, օգտագործված հասկացությունները ունեն նույն իմաստը, ինչպես սահմանված է ՀՖՖ կանոնադրությամբ և ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կանոնակարգերով:*

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Կարգավորվող հարաբերությունները

Սույն կանոնակարգով կարգավորվում են Մշտական, ժամանակավոր և Անկախ կոմիտեների (այսուհետ միասին՝ Կոմիտեներ) գործունեության առանձնահատկությունները և կարգավորումները, ընթացակարգային հարցերը:
Մշտական կոմիտեների կազմում ընդգրկված են Ֆինանսական կոմիտեն, ՀՖՖ-ի առաջնությունների կազմակերպչական կոմիտեն, Տեխնիկական և զարգացման կոմիտեն, Մրցավարական կոմիտեն, Կանանց ֆուտբոլի և ֆուտզալի կոմիտեն, Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեն, Մասսայական ֆուտբոլի կոմիտեն, Շահառուների կոմիտեն, Բժշկական կոմիտեն:
Անկախ կոմիտեների կազմում ընդգրկված են Ընտրական կոմիտեն, Աուդիտի և համապատասխանության կոմիտեն և իրավական մարմինները (ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի Կոմիտե, Բողոքարկման Կոմիտե, Վեճերի Լուծման Պալատ):

Հոդված 2. Գաղտնիություն և անկախություն

Կոմիտեների անդամները պաշտոնավարման ժամանակ և պաշտոնավարման դադարեցումից հետո չպետք է բացահայտեն (բացառությամբ ՀՖՖ-ի մարմինների օրինական պահանջի դեպքում) իրականացված գործունեության ընթացքում իրենց հայտնի դարձած որևէ տեղեկատվություն:
Այն բոլոր փաստաթղթերը, որոնք ստացվել են կամ գտնվում են անդամների մոտ իրենց գործունեության պատշաճ իրականացման նպատակով, ենթակա են վերադարձման ՀՖՖ գլխավոր քարտուղարություն՝ պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո անհապաղ կամ ՀՖՖ Գլխավոր քարտուղարի պահանջի դեպքում: Սույն հոդվածով նախատեսված գաղտնիության պայմանը խախտած Կոմիտեների անդամ(ները) պատասխանատվություն են կրում սույն կանոնակարգով, ՀՖՖ Ներքին Կազմակերպական Կանոնակարգով, ՀՖՖ Շահերի բախման ընթացակարգով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կոմիտեների անդամները պարտավորվում են զերծ մնալ ՀՖՖ շահերին և/կամ կիրառելի ու վերաբերելի կանոնակարգերին հակասող ցանկացած գործողություններից: Կոմիտեների անդամները պարտավոր են չմասնակցել ցանկացած քննարկումների և/կամ որոշումների կայացման գործընթացին, որն առնչվում է իրեն, իր ընտանիքին, հարազատներին, ընկերներին, ծանոթներին և առաջացնում է շահերի բախում:

Կոմիտեների անդամները պարտավորվում են անմիջապես տեղեկացնել տվյալ կոմիտեի նախագահին ցանկացած շահերի բախման և/կամ շահերի բախման հնարավոր ռիսկի մասին:

Այն դեպքում, երբ որևէ կոմիտեի անդամը մասնակցել է որևէ հարցի շուրջ որոշման կայացմանը և միաժամանակ թաքցրել է շահերի բախման առկայությունը, տվյալ կոմիտեի նախագահը կարող է ձեռնարկել տվյալ կոմիտեի տվյալ անդամի նկատմամբ պատասխանատվության միջոցի կիրառում՝ սահմանված սույն կանոնակարգի 8-րդ Գլխով և ՀՖՖ Կանոնադրությամբ:

Հոդված 3. ԶԼՄ-ների հետ հանդիպումներ

Կոմիտեների անդամները, ստանձնելով իրենց պաշտոնը, համաձայնություն են տալիս նիստերի վերաբերյալ ԶԼՄ-ներին ՀՖՖ-ի կողմից ցանկացած ծավալով և պարունակությամբ տեղեկատվության տրամադրմանը՝ բացառապես ՀՖՖ և տվյալ կոմիտեի նախագահի գրավոր համաձայնության դեպքում: Նիստերի բոլոր մասնակիցները պարտավորվում են չմեկնաբանել կամ ԶԼՄ-ներին և երրորդ անձանց տեղեկատվություն չտրամադրել նիստերի բովանդակության վերաբերյալ, բացառությամբ ՀՖՖ-ի կողմից կազմակերպված ԶԼՄ-ների հետ հանդիպման ընթացքում տեղեկատվության ներկայացման դեպքերի:

ՀՖՖ-ն կազմակերպում է ԶԼՄ-ների հետ հանդիպումներ վերոնշյալ կոմիտեների գործունեության վերաբերյալ, որոնց բովանդակությունը և ծավալը ենթակա են հաստատման այդ կոմիտեների նախագահների կողմից:

Կարևոր իրադարձությունների համար ԶԼՄ-ների հետ հանդիպման կազմակերպման անհրաժեշտության վերաբերյալ տվյալ կոմիտեի նախագահը Գլխավոր քարտուղարի համաձայնությունը (կազմակերպման հնարավորության վերաբերյալ) ստանալու դեպքում որոշում է կայացնում հանդիպման կազմակերպման մասին: Վերոնշյալ կոմիտեների նախագահները և Գլխավոր քարտուղարը միասին համաձայնեցնում են ԶԼՄ-ների հետ հանդիպման բովանդակությունը:

ԳԼՈՒԽ 2. ՄՇՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՆ ՆՊԱՏԱԿԸ, ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ՆԻՍՏԵՐԸ

Հոդված 4. Մշտական կոմիտեների գործունեության նպատակը և կարգավիճակը

Մշտական կոմիտեները աջակցում են Գործադիր կոմիտեին և ՀՖՖ գլխավոր քարտուղարության լիազորությունների իրականացմանը, ունեն խորհրդակցական կարգավիճակ:
Սույն կանոնակարգով նախատեսված դեպքերում Մշտական կոմիտեների որոշումը կարող է լինել վերջնական և պարտադիր կատարման ենթակա:

Հոդված 5. Մշտական կոմիտեների կազմը և անդամները

Մշտական կոմիտեները կազմված են նախագահից, փոխնախագահից և համապատասխան քանակով անդամներից: Մշտական կոմիտեների անդամները, փոխնախագահները և նախագահները նշանակվում են Գործադիր կոմիտեի կողմից՝ ՀՖՖ-ի անդամների կամ ՀՖՖ-ի Նախագահի առաջարկությամբ: Մշտական կոմիտեների նախագահները կարող են լինել Գործադիր կոմիտեի անդամներ (բացառությամբ Մրցավարական կոմիտեի նախագահի, որը Գործադիր կոմիտեի անդամ չի կարող հանդիսանալ): Գործադիր կոմիտեն պարտավոր է ապահովել կանանց ներկայացվածությունը Մշտական կոմիտեների կազմում: Անհրաժեշտության դեպքում Գործադիր Կոմիտեն կարող է նշանակել արտաքին տեխնիկական անձնակազմ կամ փորձագետներ: Գործադիր Կոմիտեն և վերջինիս հաստատմամբ՝ յուրաքանչյուր Մշտական կոմիտե կարող է անհրաժեշտության դեպքում հիմնել բյուրո և/կամ ենթակոմիտե, որը կզբաղվի հրատապ հարցերի լուծմամբ: Այդ բյուրոյի և/կամ ենթակոմիտեի բոլոր քննարկումների և որոշումների մասին զեկուցվում է համապատասխան Մշտական կոմիտեին՝ առաջին իսկ հնարավորության դեպքում:

Հոդված 6. Մշտական կոմիտեների անդամների նշանակման կարգը, պաշտոնավարման ժամկետը, իրենց գործունեությունը կարգավորող նորմատիվ և իրավական բազան:

Մշտական կոմիտեների նախագահները, փոխնախագահները և անդամները նշանակվում են չորս տարի ժամկետով, ՀՖՖ կանոնադրությամբ և սույն կանոնակարգով սահմանված ընթացակարգով, առանց արտաքին որևէ ազդեցության: Մշտական կոմիտեների անդամները պարտավոր են իրենց պաշտոնավարման ընթացքում հետևել և առաջնորդվել սույն Կանոնակարգով, ՀՖՖ-ի Կանոնադրությունով, ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կանոնակարգերով, կարգադրություններով, որոշումներով, հրամաններով, կանոններով և այլ կիրառելի նորմատիվ իրավական ակտերով: Մշտական կոմիտեների անդամները նախկինում չպետք է պաշտոնի հետ անհամատեղելի որևէ հանցագործության համար դատապարտված լինեն:
Մշտական կոմիտեների անդամները պարտավոր են զերծ մնալ հարցերի քննարկմանը և քվեարկությանը մասնակցելուց, եթե առկա է շահերի բախման հավանականություն կամ

հնարավորություն: Մասնավորապես, Մշտական կոմիտեների անդամները պետք է մշտապես տեղեկացված լինեն և ենթարկվեն ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ Էթիկային և շահերի բախմանն առնչվող համապատասխան դրույթներին և համապատասխանեցնեն իրենց վարքագիծը այդ դրույթների պահանջներին (օր.՝ հայտարարեն ինքնաբացարկ, ծանուցեն ՀՖՖ-ի Նախագահին և Գլխավոր քարտուղարին շահերի հնարավոր բախման մասին):

Հոդված 7. Մշտական կոմիտեների աշխատանքների կազմակերպման կարգը, նիստերի գումարման պարբերականությունը, նիստերի վերաբերյալ անդամներին ծանուցումը, օրակարգի ներկայացումը

Մշտական կոմիտեների յուրաքանչյուր նախագահ ՀՖՖ Գլխավոր քարտուղարի հետ համատեղ քննարկումից հետո սահմանում է նիստերի գումարման օրերը, ապահովում է բոլոր խնդիրների կարգավորմանն ուղղված գործողությունների կատարումը: Բոլոր դեպքերում Մշտական կոմիտեների նիստերը տեղի են ունենում վերոնշյալ կոմիտեների նախագահների որոշմամբ՝ աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, որպես կանոն տարեկան առնվազն 2 անգամ: Մշտական կոմիտեների նախագահները գլխավոր քարտուղարության հետ համատեղ նիստերի գումարման օրվա և ժամի մասին 5 օր առաջ ծանուցում են բոլոր անդամներին, ելնելով անհրաժեշտությունից նաև երրորդ անձանց և/կամ մասնագիտական համապատասխան գիտելիքներ ունեցող մասնագետներին՝ ներկայացնելով օրակարգը: Արտակարգ հարցերի դեպքերում (երբ անհրաժեշտ է նիստն անցկացնել, օրինակ, 3 օրից) Մշտական կոմիտեի նախագահը, խորհրդակցելով ՀՖՖ Գլխավոր քարտուղարի հետ, իրավունք ունի հրավիրելու Մշտական կոմիտեի արտակարգ նիստ՝ այդ մասին ծանուցելով բոլոր անդամներին՝ նիստի նշանակումից առնվազն 1 օր առաջ: Ծանուցումը համարվում է պատշաճ ուղարկված Մշտական կոմիտեների անդամների էլեկտրոնային հասցեին և/կամ վերջինիս հետ համաձայնեցված այլ եղանակով ուղարկվելու դեպքում:
Մշտական կոմիտեների նիստերն անցկացվում են դռնփակ կարգով, սակայն վերոնշյալ կոմիտեների նախագահների որոշմամբ, աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, երրորդ անձինք կամ մասնագիտական համապատասխան գիտելիքներ ունեցող մասնագետները ևս կարող են մասնակցել նիստերին:

Հոդված 8. Մշտական կոմիտեների աշխատանքների ծրագիրը

Հաշվի առնելով Մշտական կոմիտեների առաջնային խնդիրները՝ վերոնշյալ կոմիտեների նախագահները կոմիտեի անդամների և Գլխավոր քարտուղարի հետ համատեղ քննարկումներից հետո հաստատում են համապատասխան կոմիտեի աշխատանքների ծրագիրը:
Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար (վեց ամիս) սահմանվում են առաջնային խնդիրները և կատարվելիք աշխատանքները՝ հաշվի առնելով դրանց կարևորությունը և առաջնահերթությունը:

Հոդված 9. Մշտական կոմիտեների գործունեության ոլորտը սպասարկող ՀՖՖ ստորաբաժանումները

ՀՖՖ Մշտական կոմիտեների գործունեության համակարգումն իրականացնում է տվյալ կոմիտեի ոլորտը սպասարկող ՀՖՖ ստորաբաժանումն՝ ըստ ստորև ներկայացված աղյուսակի.

Կոմիտեի անվանում	**Ոլորտը սպասարկող ՀՖՖ ստորաբաժանում**
Ֆինանսական կոմիտե	Ֆինանսահաշվային դեպարտամենտ
ՀՖՖ-ի առաջնությունների կազմակերպչական կոմիտե	Մրցումների կազմակերպման և անցկացման բաժին
Տեխնիկական և զարգացման կոմիտե	Տեխնիկական տնօրինություն
Մրցավարական կոմիտե	Մրցավարական և տեսչական բաժին
Կանանց ֆուտբոլի և ֆուտզալի կոմիտե	Կանանց ֆուտբոլի բաժին, Ֆուտզալի բաժին
Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտե	Արտոնագրման բաժին
Մասսայական ֆուտբոլի կոմիտե	Մասսայական ֆուտբոլի բաժին
Շահառուների կոմիտե	Ֆուտբոլի դեպարտամենտի ղեկավար կամ վերջինիս կողմից լիազորված անձ
Բժշկական կոմիտե	Բժշկական դեպարտամենտ

Հոդված 10. Մշտական կոմիտեների գործունեության մեջ ՀՖՖ Գլխավոր քարտուղարի, տվյալ կոմիտեի ոլորտը սպասարկող ՀՖՖ ստորաբաժանման և ՀՖՖ Իրավաբանական և ՄՌ բաժնի դերը

Մշտական կոմիտեների նիստերին ըստ անհրաժեշտության կարող է մասնակցել Գլխավոր քարտուղարը (կամ նրա կողմից լիազորված՝ ՀՖՖ Նախագահի և գլխավոր քարտուղարի գրասենյակի աշխատակիցը կամ ՀՖՖ իրավաբանական և ՄՌ բաժնի աշխատակից(ներ)ը)։

Մշտական կոմիտեի ոլորտը սպասարկող ՀՖՖ ստորաբաժանումը

- Իրականացնում է/են կոմիտեների նիստերի կազմակերպական աշխատանքները և այլ վարչական գործառույթներ,

- Կոմիտեների նախագահների անունից ներկայացնում է/են ծանուցումներ նիստերին մասնակցության վերաբերյալ,
- Պատրաստում և ներկայացնում է/են նիստերի վերաբերյալ փաստաթղթեր (ներառյալ օրակարգի վերջնական տարբերակը) նիստերի մասնակիցներին,
- Վարում և պարբերաբար թարմացնում է/են կոմիտեների անդամների տվյալների շտեմարանը,
- Հանդես է/են գալիս որպես անդամների և ՀՖՖ-ի միջև կապող օղակ,
- Ապահովում է/են նիստերի արձանագրությունների վարումը,
- Ապահովում է/են ապրանքանյութական առարկաների գնումը և տրամադրումը,
- Կոմիտեների անխափան ու պատշաճ կարգով գործունեության իրականացման համար ապահովում է/են այլ անհրաժեշտ միջոցները:

ՀՖՖ Իրավաբանական և ՄՌ բաժինը վերոգրյալ գործառույթների իրականացման շրջանակներում ցուցաբերում է իրավաբանական աջակցություն և ապահովում Մշտական կոմիտեի ոլորտը սպասարկող ՀՖՖ ստորաբաժանման համապատասխան աշխատակիցների հետ հաղորդակցությունը:

Հոդված 11. Մշտական կոմիտեների գործունեության մեջ կոմիտեների նախագահների դերը

Կոմիտեների նախագահները.

- Համապատասխան կոմիտեի ոլորտը սպասարկող ՀՖՖ ստորաբաժանման աշխատակցի հետ միասին նախապատրաստում են կոմիտեների նիստերը (օրակարգը, ծանուցումները և այլն.),
- Նախագահում են կոմիտեների նիստերը,
- Նիստերի ընթացքում ղեկավարում են բոլոր քննարկումները և ապահովում են նիստերի բնականոն ընթացքը,
- Իրացնում են իրենց որոշիչ ձայնի իրավունքը՝ ձայների հավասարության դեպքում,
- Հաստատում են տվյալ կոմիտեի գործողությունների ցանկը,
- Մամլո ասուլիսների ժամանակ հանդես են գալիս կոմիտեի անունից,
- Անմիջապես տեղեկացնում են կոմիտեի անդամներին ցանկացած հատուկ հարցերի վերաբերյալ,

Մշտական կոմիտեների նախագահները համակարգում են նիստերի ընթացքում հանդես եկողների ելույթները, անհրաժեշտության դեպքում սահմանափակում են ելույթով հանդես եկողների ժամանակը կամ ձեռնարկում այլ միջոցներ նիստերի բնականոն ընթացքն ապահովելու նպատակով:

Հոդված 12. Մշտական կոմիտեների նիստերի նախագահողը

Մշտական կոմիտեների նախագահները, իսկ նրանց բացակայության դեպքում՝ փոխնախագահները, նախագահում են նիստերը: Այն բոլոր դեպքերում, երբ նախագահը և փոխնախագահը ներկա չեն նիստերին, ապա Մշտական կոմիտեների անդամները պետք է ձայների պարզ մեծամասնությամբ ընտրեն այդ նիստը նախագահողին:

Հոդված 13. Մշտական կոմիտեների նիստերի օրակարգը

Մշտական կոմիտեների յուրաքանչյուր նախագահ, տվյալ կոմիտեի ոլորտը սպասարկող ՀՖՖ ստորաբաժանման աշխատակցի հետ միասին նախապատրաստում է կոմիտեի նիստերի օրակարգի նախագիծը:
Նիստերի օրակարգի մեջ պետք է ներառվեն նվազագույնը հետևյալ կետերը.

- Նախագահի ողջույնի խոսքը,
- Անդրադարձ և հաշվետվության ներկայացում նախորդ նիստի արդյունքներով ձևավորված գործողությունների ցանկի վերաբերյալ,
- Հաջորդ (կայանալիք) նիստի ընթացքում քննարկվող հարցերը,
- Հաջորդ (կայանալիք) նիստի օրը, վայրը և ժամը,
- Այլ անհրաժեշտ հարցեր:

Նիստի օրակարգի նախագիծը՝ նիստին մասնակցության հրավերի հետ միասին նիստի կայացման օրվանից ոչ ուշ քան 5 օր առաջ ուղարկում է (էլեկտրոնային եղանակներով) վերոնշյալ կոմիտեների անդամներին:

Մշտական կոմիտեների յուրաքանչյուր անդամ իրավունք ունի նիստերի օրակարգում ներառելու նպատակով ներկայացնել վերոնշյալ կոմիտեների գործառույթների հետ առնչվող առաջարկ, հարց և/կամ խնդիր: Նման առաջարկ(ներ), հարց(եր) և/կամ խնդիր(ներ) ներկայացնող անդամը պարտավոր է այն էլեկտրոնային եղանակով ներկայացնել վերոնշյալ կոմիտեների նախագահներին հաջորդ (կայանալիք) նիստի օրվանից ոչ ուշ, քան 1 օր առաջ: Նման առաջարկ(ներ), հարց(եր) և/կամ խնդիր(ներ) ներկայացնող անդամը պարտավոր է հստակ ձևակերպել այդ առաջարկ(ներ)ը, հարց(եր)ը և/կամ խնդիր(ներ)ը, համապատասխան հիմնավորումների հետ միասին: Սույն կետի իմաստով բացառություն է նախատեսվում Շահառուների կոմիտեի անդամների համար, որոնք կարող են օրակարգում ավելացնելու նպատակով առաջարկել միայն հարցեր, որոնք վերաբերում են իրենց կազմակերպության կանոնադրական նպատակներին:

Նիստի կայացման օրվանից ոչ ուշ, քան 1 օր առաջ տվյալ կոմիտեի նախագահը օրակարգի վերջնական տարբերակը, հիմնավորող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է վերոնշյալ կոմիտեների անդամներին և նիստին մասնակցող կամ հրավիրված երրորդ անձանց:

Սահմանված ժամկետում մասնակիցներին ներկայացված վերջնական օրակարգում հետագայում չեն կարող կատարվել փոփոխություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ վերոնշյալ կոմիտեների նախագահների որոշմամբ օրակարգում կատարվող փոփոխություն(ներ)ը ճանաչվում է(են) հրատապ և անհրաժեշտ:

Հոդված 14. Մշտական կոմիտեների անդամների ձայնի իրավունքը, քվորումը և քվեարկության կարգը

Մշտական կոմիտեների յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք և այն իրացնում է անձամբ: Քննարկվող հարցերի վերաբերյալ քվեարկությունն իրականացվում է բաց

քվեարկությամբ, եթե տվյալ կոմիտեի Նախագահի կողմից այլ ձևով քվեարկություն կազմակերպելու վերաբերյալ որոշում չի կայացվել:
Մշտական կոմիտեների նիստերը իրավազոր են (քվորումն ապահովված է) միայն այն դեպքում, եթե քվեարկելու իրավունք ունեցող անդամների պարզ մեծամասնությունը (ավելի քան 50%-ը) ներկա է նիստին: Եթե նիստի սկզբում քվորում չկա, ապա հաջորդ օրը՝ նույն ժամին և նույն վայրում, գումարվում է երկրորդ նիստը՝ նույն օրակարգով: Հաջորդ օրը կայանալիք նիստի սկզբում քվորում չլինելու դեպքում, տվյալ կոմիտեի նախագահն իրավունք ունի որոշում կայացնել նիստը սկսել ներկա անդամներով կամ հետաձգել նիստը և նշանակել մեկ այլ օր: Մշտական կոմիտեների կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշիչ է կոմիտեի նախագահի ձայնը: Ներկայացուցչի կամ նամակի միջոցով քվեարկությունն արգելվում է:
Մշտական կոմիտեների նիստերը համապատասխան կոմիտեի նախագահի որոշմամբ կարող են անցակցվել նաև հեռավար, հիբրիդային և/կամ գրավոր կարգով՝ էլեկտրոնային նամակագրության միջոցով:
Ցանկացած պարագայում պետք է ապահովի անդամների և նիստին մասնակցելու իրավունք ունեցող այլ անձանց՝ նիստին մասնակցելու համար պաշտաճ հնարավորություն և միջոցառումներ:

Հոդված 15. Մշտական կոմիտեների նիստի արձանագրությունները

Մշտական կոմիտեների բոլոր նիստերը գրավոր արձանագրվում են կոմիտեի ոլորտը սպասարկող ՀՖՖ համապատասխան ստորաբաժանման (սույն կանոնակարգի Հոդված 9-ով սահմանված) կողմից և պատշաճ կարգով (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ էլեկտրոնային փոստով) ներկայացվում են անդամների հաստատմանը՝ նիստի օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում: Արձանագրությունները պետք է ներառեն հետևյալ նվազագույն տեղեկատվությունը.

- նիստի օրը և վայրը, նիստի անցակցման եղանակը (հեռավար, հիբրիդային և/կամ գրավոր),
- նիստին ներկա և բացակա անդամների կազմը,
- նիստի մասնակից հրավիրյալ այլ անձանց անունները,
- օրակարգը,
- քննարկումները,
- նիստի ընթացքում մասնակիցների կողմից կատարված մեկնաբանությունները, որոնք բացահայտ անհրաժեշտության սկզբունքով կամ մասնակիցների պահանջով ենթակա են ներառման,
- կայացված որոշումների և/կամ կատարման համար անհրաժեշտ միջոցառումների նկարագիրը,
- անհրաժեշտության դեպքում՝ Գործողությունների/պարտականությունների կատարման համար նշանակված և պատասխանատու անձանց ցանկը, ինչպես նաև Գործողությունների/պարտականությունների կատարման համար հստակ վերջնաժամկետները,
- կոմիտեի նախագահի ստորագրությունը:

Մշտական կոմիտեների անդամները պետք է հաստատեն այդ արձանագրությունները՝ ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում և վերադարձնեն կոմիտեի գործունեության ոլորտը սպասարկող ՀՖՖ ստորաբաժանման համապատասխան աշխատակցին: Արձանագրությունները համարվում են հաստատված այն բոլոր դեպքերում, երբ անդամներն այն ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում կոմիտեի գործունեության ոլորտը սպասարկող ՀՖՖ ստորաբաժանման համապատասխան աշխատակցին չեն ներկայացնում դրա վերաբերյալ գրավոր առարկություններ: Եթե վերոնշյալ ժամկետում կոմիտեի գործունեության ոլորտը սպասարկող ՀՖՖ համապաստախան համապատասխան աշխատակցի կողմից ստացվում են առարկություններ արձանագրության վերաբերյալ, ապա տվյալ արձանագրությունը կամ դրա՝ առարկության վերաբերող հատվածը, քննարկման նպատակով ներառվում է կոմիտեի հաջորդ նիստի օրակարգում: Բոլոր դեպքերում կոմիտեների նիստերի արձանագրություններով սահմանված որոշումներն ուժի մեջ են մտնում նիստի ավարտից անմիջապես հետո: Կոմիտեների անդամների կողմից արձանագրությունների հաստատումից հետո դրանք ստորագրվում են տվյալ կոմիտեի նախագահի կողմից:

Մշտական կոմիտեների նիստի՝ համապատասխան կոմիտեի նախագահի կողմից արձանագրությունը ստորագրելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում կոմիտեի գործունեության ոլորտը սպասարկող ՀՖՖ ստորաբաժանման համապաստախան աշխատակիցը էլեկտրոնային եղանակով կամ ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով ներկայացնում է ՀՖՖ Գլխավոր քարտուղարին: Այնուամենայնիվ, կոմիտեի նիստի արձանագրության ստորագրված թղթային տարբերակը կոմիտեի գործունեության ոլորտը սպասարկող ՀՖՖ ստորաբաժանման համապաստախան աշխատակիցը եռօրյա ժամկետում ներկայացնում է ՀՖՖ Գլխավոր քարտուղարի գրասենյակ՝ արխիվացման նպատակով:

ՀՖՖ Գլխավոր քարտուղարը, մշտական կոմիտեի նիստի արձանագրությունը ստանալուց հետո, իր իրավասության սահմաններում որոշում է կայացնում արձանագրությունից և կոմիտեի կողմից կայացված որոշումներից բխող գործողություններ կատարելու վերաբերյալ:

Հոդված 16. Մշտական կոմիտեների կողմից աշխատանքային խմբերի ձևավորումը

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով՝ կոմիտեների կողմից կարող են ձևավորվել աշխատանքային խմբեր՝ հատուկ աշխատանքների իրականացման կամ հատուկ հարցերի ուսումնասիրության կատարման նպատակով (օրինակ՝ ֆուտբոլային գործունեության տարբեր կողմերում հանդես եկող և տարբեր անձանց շահերը ներկայացնող անձանց համար սոցիալական հարթակի ստեղծում): Աշխատանքային խմբերում կարող են ներգրավվել անձինք, որոնք չեն հանդիսանում վերոնշյալ կոմիտեների անդամներ:

ԳԼՈՒԽ 3. ՄՇՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԿԱԶՄԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Հոդված 17. ՀՖՖ-ի կառուցվածքային ստորաբաժանումներ հանդիսացող մշտական կոմիտեներն են.

ա) Ֆինանսական կոմիտե

բ) ՀՖՖ-ի առաջնությունների կազմակերպչական կոմիտե

գ) Տեխնիկական և զարգացման կոմիտե

դ) Մրցավարական կոմիտե

ե) Կանանց ֆուտբոլի և ֆուտզալի կոմիտե

զ) Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտե

է) Մասսայական ֆուտբոլի կոմիտե

ը) Շահառուների կոմիտե

թ) Բժշկական կոմիտե:

Հոդված 18. Ֆինանսական կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները

Ֆինանսական կոմիտեն վերահսկում է ՀՖՖ-ի ֆինանսական կառավարումը և Գործադիր կոմիտեին խորհրդատվություն է ներկայացնում ակտիվների կառավարման և ֆինանսական հարցերի վերաբերյալ: Կոմիտեն վերլուծում է ՀՖՖ-ի բյուջեն, Գլխավոր քարտուղարի կողմից կազմված ֆինանսական հաշվետվությունները և դրանք ներկայացնում է Գործադիր կոմիտեի հաստատմանը: Ֆինանսական կոմիտեն Գործադիր կոմիտեին նաև աջակցում և խորհրդատվություն է տրամադրում հետևյալ ֆինանսական ուղղություններով.

- Ֆինանսական հաշվետվությունների կազմում և ներկայացում Գործադիր կոմիտեին և Ժողովին,
- Բյուջեի կազմում և կանխատեսում (ռազմավարական ֆինանսական հեռանկար),
- Ակտիվների և ֆինանսների ռիսկայնության կառավարում,
- Ներդրումային քաղաքականության մշակում,

- Անկախ Աուդիտորների, աուդիտի և համապատասխանության կոմիտեի կողմից տրված եզրակացության վերլուծում, առաջարկների և խնդիրների կառավարում և համապատասխանեցում,
- Թափանցիկ և պատշաճ ֆինանսական կառավարում,
- Ներքին վերահսկողության մեխանիզմների ներդնում:

Ֆինանսական կոմիտեն առաջնորդվում է Գործադիր կոմիտեի կողմից մատնանշված առաջնահերթ նպատակներով և ուղղություններով: Ֆինանսական կոմիտեն իր գործունեության իրականացման ընթացքում համագործակցում է աուդիտի և համապատասխանության կոմիտեի հետ:

Հոդված 19. Ֆինանսական կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները

Ֆինանսական կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և երկու անդամից: Ֆինանսական կոմիտեի փոխնախագահ կամ անդամ առաջադրվող անձինք պետք է ունենան հետևյալ որակավորումներից առնվազն մեկը՝

1. Հաշվապահի դիպլոմ կամ հավաստագիր
2. Որակավորված աուդիտորի դիպլոմ և/կամ հավաստագիր
3. Ֆինանսիստի դիպլոմ և/կամ որակավորում և/կամ հավաստագիր

Վերոնշյալ որակավորման պահանջը չի տարածվում ֆինանսական կոմիտեի նախագահ առաջադրվող անձանց նկատմամբ:

Տվյալ պաշտոնի (անդամության) թեկնածուների թիվը մեկից ավել լինելու դեպքում Գործադիր կոմիտեի կողմից որոշում կայացնելու ժամանակ հաշվի է առնվում տվյալ թեկնածուի աշխատանքային փորձը, մասնագիտական աստիճանը և որակավորումը՝ առավելություն տալով ավելի փորձառու և մասնագիտական բարձր որակներ ունեցող թեկնածուին:

Հոդված 20. ՀՖՖ-ի առաջնությունների կազմակերպչական կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները

ՀՖՖ-ի առաջնությունների կազմակերպչական կոմիտեն ՀՖՖ-ի կողմից անցկացվող Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի և լողափնյա ֆուտբոլի բոլոր մակարդակների առաջնությունների կազմակերպման շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթները՝ համաձայն ՀՖՖ Կանոնադրության, ՈՒԵՖԱ-ի, ՖԻՖԱ-ի և ՀՖՖ-ի առաջնությունների համար կիրառելի կանոնակարգերի.

- Կազմակերպում է քննարկումներ, համաժողովներ, հանդիպումներ և լսումներ ՀՖՖ-ի կողմից անցկացվող Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի և լողափնյա ֆուտբոլի բոլոր մակարդակների առաջնությունների հետ կապված, ներառյալ՝ ֆինանսական, մարքեթինգային և կարգապահական հարցերի,

- Ձևավորում է առաջարկությունների փաթեթ՝ կապված գոյություն ունեցող և ՀՖՖ-ի կողմից անցկացվող Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի և լողափնյա ֆուտբոլի բոլոր մակարդակների առաջնությունների ու դրանք կանոնակարգող օրենսդրության հնարավոր փոփոխությունների վերաբերյալ,
- Ուսումնասիրում է ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կողմից Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի և լողափնյա ֆուտբոլի վերաբերյալ կազմված և հրապարակված առաջարկությունները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դրանց վերաբերյալ Գործադիր կոմիտեին ներկայացնում է առաջարկությունների փաթեթ,
- Առաջարկություններ է ներկայացնում Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի և լողափնյա ֆուտբոլի առաջնությունների եզրափակիչների անցկացման վայրի վերաբերյալ,
- Սահմանում է խաղերի անցկացման ժամանակացույցերի ձևավորման սկզբունքները՝ մարզադաշտերի և քաղաքների համընկնման դեպքում,
- Առաջարկություններ է ներկայացնում Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի և լողափնյա ֆուտբոլի առաջնություններից ստացված եկամտի բաշխման սկզբունքի վերաբերյալ,
- Վերահսկում է ՀՖՖ-ի կողմից անցկացվող Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի և լողափնյա ֆուտբոլի բոլոր մակարդակների առաջնությունների կազմակերպչական և ավարտական աշխատանքների փուլերը,
- Աջակցում է վիճակահանության սկզբունքների ձևավորման հարցում և վերահսկում է վիճակահանությունների կազմակերպչական և անցկացման ընթացքը,

Հոդված 21. ՀՖՖ-ի Առաջնությունների կազմակերպչական կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները

ՀՖՖ-ի առաջնությունների կազմակերպչական կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և երեք անդամից:
ՀՖՖ-ի առաջնությունների կազմակերպչական կոմիտեի անդամ առաջադրվող անձանց համար հատուկ որակավորման և մասնագիտական պահանջներ չեն սահմանվում, սակայն տվյալ պաշտոնի (անդամության) թեկնածուների թիվը մեկից ավել լինելու դեպքում Գործադիր կոմիտեի կողմից որոշում կայացնելու ժամանակ հաշվի է առնվում տվյալ թեկնածուի աշխատանքային փորձը, մասնագիտական աստիճանը և որակավորումը՝ առավելություն տալով տվյալ թեկնածուին:

Հոդված 22. Տեխնիկական և զարգացման կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները

Տեխնիկական և զարգացման կոմիտեն գլխավորապես վերլուծում է ֆուտբոլային մարզումների և ֆուտբոլում տեխնիկական զարգացման հիմնական ուղղությունները: Կոմիտեն նաև պատասխանատու է ՀՖՖ-ի զարգացման ծրագրերի, համապատասխան ռազմավարություններ մշակելու և առաջարկելու, տվյալ ռազմավարությունները վերահսկելու, ՀՖՖ-ի Անդամներին տրամադրվող աջակցությունը և ծրագրերը վերլուծելու և Գործադիր կոմիտեին զարգացման ընդհանուր բնույթի հարցերով խորհրդատվություն տրամադրելու համար: Տեխնիկական և զարգացման կոմիտեն նաև իրականացնում է հետևյալ գործողությունները.

- Ուսումնասիրում է ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի տեխնիկական և ֆուտբոլային աջակցության և փորձի փոխանակման ծրագրերը, որոնք կիրառվում են անդամ ասոցիացիաներում,
- Աջակցում և նպաստում է մարզումների, կրթության և տեխնիկական հաշվետվությունների մեջ պարունակվող տեղեկատվության տարածմանը,
- Աջակցում է ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի տեխնիկական մասնագետներին և խորհրդատուներին,
- Հետևում է ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կանոնակարգերի զարգացմանը և կիրառմանը,
- Հետևում է ոչ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների և խաղացողների զարգացմանը,
- Քննարկում է ՀՖՖ մանկապատանեկան և սիրողական մրցումների վերաբերյալ կազմակերպչական, կանոնակարգային, ենթակառուցվածքային, ձևաչափի և այլ առկա խնդիրները և դրանց վերաբերյալ հանդես գալիս առաջարկություններով,

Հոդված 23. Տեխնիկական և զարգացման կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները

Տեխնիկական և զարգացման կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և երեք անդամից:
Տեխնիկական և զարգացման կոմիտեի անդամ առաջադրվող անձանց համար հատուկ որակավորման և մասնագիտական պահանջներ չեն սահմանվում, սակայն տվյալ պաշտոնի (անդամության) թեկնածուների թիվը մեկից ավել լինելու դեպքում Գործադիր կոմիտեի կողմից որոշում կայացնելու ժամանակ հաշվի է առնվում տվյալ թեկնածուի աշխատանքային փորձը, մասնագիտական աստիճանը և որակավորումը՝ առավելություն տալով տվյալ թեկնածուին:

Հոդված 24. Մրցավարական կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները

Մրցավարական կոմիտեն ապահովում է Խաղի կանոնների կիրառումը: Մրցավարական կոմիտեն նշանակում է ՀՖՖ-ի կողմից կազմակերպվող առաջնությունների մրցավարներին, ՀՖՖ-ի աշխատակազմի հետ համագործակցությամբ կազմակերպում է մրցավարական գործընթացները և վերահսկում մրցավարների որակավորման և վերապատրաստման աշխատանքները: Մրցավարական կոմիտեն նաև իրականացնում է հետևյալ գործողությունները.

- Ստեղծում է ՀՖՖ Մրցավարների և տեսուչների պատասխանատվության մասին կանոնակարգը,
- Խորհրդատվական կարգավիճակով մասնակցում է ՀՖՖ Գործադիր կոմիտեի՝ մրցավարական հարցերին վերաբերող յուրաքանչյուր նիստին,
- ՈՒԵՖԱ-ի Մրցավարական կոնվենցիայի պանելին է ներկայացնում կոմիտեի կամ ՀՖՖ Մրցավարական և տեսչական բաժնի անձնակազմի յուրաքանչյուր փոփոխություն, ինչպես նաև ՀՖՖ Մրցավարների և տեսուչների պատասխանատվության մասին կանոնակարգի բոլոր փոփոխությունները,

- Հաստատում է ՀՖՖ Մրցավարական և տեսչական բաժնի կողմից կազմված տարեկան մրցավարական բյուջեն և ներկայացնում գործադիր կոմիտեի վերջնական հաստատմանը,
- Յուրաքանչյուր մրցաշրջանից առաջ դասակարգում է մրցավարներին և տեսուչներին՝ ըստ լիգաների, իրականացնում է մրցումները սպասարկող մրցավարների և տեսուչների համար պարտադիր չափորոշիչների և խաղերի սպասարկման հիման վրա վարկանիշային համակարգի սահմանումն ու հսկողությունը,
- Հաստատում է հեռանկարային մրցավարների դասընթացների մասնակիցների և հրահանգիչների ցուցակները,
- Կազմում է մրցավարական կրթության և զարգացման համընդհանուր ռազմավարական պլան՝ նպատակներով, հիմնական կատարողականի ցուցանիշներով, համապատասխան բյուջեով և օժանդակ ծառայություններով,
- Մրցավարների, մրցավարների օգնականների, տեսուչների, հրահանգիչների համար պատրաստում և սահմանում է զարգացման նյութեր ու կազմակերպում է ուսուցման ծրագրեր և դասընթացներ՝ Խաղի կանոնների ճիշտ, միասնական և կայուն կիրառման գործընթացի ապահովման նպատակով: Միաժամանակ, կոմիտեն պետք է ապահովի, որպեսզի բոլոր մրցավարները, տեսուչները և հրահանգիչները մասնակցեն վերոնշյալ դասընթացներին,
- Նշանակում է Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի և լողափնյա ֆուտբոլի բոլոր մակարդակի առաջնությունների մրցավարներին, մրցավարների օգնականներին, տեսուչներին, նրանց համար սահմանում է նշանակման և գնահատման ուղեցույցներ, ինչպես նաև վերահսկում է դրանց կատարումը,
- Խրախուսում և/կամ որակազրկում է ՀՖՖ բոլոր մրցավարներին, տեսուչներին և հրահանգիչներին
- Առաջադրում է է ՖԻՖԱ-ի միջազգային մրցավարական ցուցակի թեկնածուներ,
- Առաջադրում է ՈՒԵՖԱ-ի մրցավարների տեսուչների ցուցակի թեկնածուներ,
- Իրականացնում է մրցավարների տեսուչների գործունեության որակի վերահսկման գործընթաց,
- Փնտրում և աջակցում է երիտասարդ ու հեռանկարային մրցավարներին,
- Տարբեր ծրագրերի և միջոցառումների միջոցով աջակցում և զարգացնում է մրցավարությունը ՀՀ մարզերում,
- Քննարկում է շահագրգիռ անձանց կողմից ստացված առաջարկները ՀՀ-ում մրցավարության մակարդակը բարձրացնելու և բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ,
- Ներկայացնում է մրցավարների, մրցավարների օգնականների, տեսուչների և հրահանգիչների անդամների ցանկում նոր մասնագետներ ներառելու առաջարկներ,
- Իրականացնում է մրցավարության հետ կապված միջադեպերի և կարգապահական հարցերի քննարկում և պատժամիջոցների կիրառում,
- Մրցավարական սխալներ և այլ խախտումներ թույլ տված մրցավարների նկատմամբ համապատասխան պատժամիջոցների կիրառում՝ համաձայն ՀՖՖ Մրցավարների և տեսուչների պատասխանատվության մասին կանոնակարգի,
- Իրենց պարտականությունների կատարման մեջ թերացած և սխալներ գործած տեսուչների հարցերի քննարկում ու պատժամիջոցների կիրառում (որոնք ենթակա են պարտադիր կատարման)համաձայն ՀՖՖ Մրցավարների և տեսուչների պատասխանատվության մասին կանոնակարգի,

- Դիտում և վերլուծում է ՀՖՖ պրոֆեսիոնալ մրցումների բոլոր խաղերը և մրցավարական բոլոր դրվագները ենթարկում է ուսումնասիրության և տալիս է համապատասխան եզրակացություն:

Մրցավարական կոմիտեին իր գործունեության ընթացքում աջակցում են բոլոր մրցավարները, մրցավարների օգնականները, տեսուչները, հրահանգիչները:
Մրցավարական կոմիտեն իր լիազորությունների շրջանակում, Մրցավարների և տեսուչների պատասխանատվության մասին կանոնակարգի, ինչպես նաև ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի այլ վերաբերելի կանոնակարգերի համաձայն կարող է կայացնել որոշումներ և/կամ կիրառել կարգապահական տույժեր, որոնք վերջնական են և ենթակա են պարտադիր կատարման:

Հոդված 25. Մրցավարական կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները

Մրցավարական կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և հինգ անդամից:
Մրցավարական կոմիտեի նախագահը չի կարող միաժամանակ լինել ՀՖՖ Գործադիր կոմիտեի անդամ: Մրցավարական կոմիտեի անդամը չի կարող միաժամանակ հանդիսանալ ՀՖՖ Մրցավարական և տեսչական բաժնի աշխատակից:
Մրցավարական կոմիտեի անդամների առնվազն 80%-ը պետք է ունենա մրցավարական մասնագետի առնվազն հինգ տարվա փորձ:
Անդամների մինչև 20%-ը կարող են լինել ոչ մասնագետներ, ովքեր ունեն այլ գիտելիքներ և փորձ, որոնք կարող են օգտակար լինել կոմիտեի աշխատանքին:

Հոդված 26. Կանանց ֆուտբոլի և ֆուտզալի կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները

Կանանց ֆուտբոլի և ֆուտզալի կոմիտեն ՀՖՖ-ի կանանց ֆուտբոլի և ֆուտզալի առաջնությունների կազմակերպման շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթները՝ և

- Կազմակերպում է քննարկումներ և մտքերի փոխանակման հարթակներ կանանց ֆուտբոլի և ֆուտզալի հիմնական հարցերի, թեմաների և խնդիրների վերաբերյալ,
- Ձևավորում է առաջարկների փաթեթ գործող մրցաշարերի և դրանց կարգավորող օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ,
- Առաջարկություններ է ներկայացնում կանանց ֆուտբոլի և ֆուտզալի առաջնությունների եզրափակիչների անցկացման վայրի վերաբերյալ,
- Աջակցում է կանանց ֆուտբոլի և ֆուտզալի հետ կապված համաժողովների և դասընթացների ծրագրային բաղադրիչների ձևավորման հարցում,
- Մոնիթորինգ է իրականացնում ՀՖՖ-ի կողմից կազմակերպվող կանանց ֆուտբոլի և ֆուտզալի առաջնությունների մրջաշարերի նկատմամբ,
- Աջակցում է վիճակահանության սկզբունքների ձևավորման հարցում և վերահսկում է վիճակահանությունների կազմակերպչական և անցկացման ընթացքը,

- Ներկայացնում է առաջարկություններ միջազգային օրացույցի կազմման հարցում, ներառյալ ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կողմից կազմակերպվող ազգային հավաքականների մրցումների համար,
- Աջակցում է կանանց ֆուտբոլի և ֆուտզալի զարգացման ռազմավարության և ծրագրերի ձևավորման և իրականացման հարցում:

Հոդված 27. Կանանց ֆուտբոլի և ֆուտզալի կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները

Կանանց ֆուտբոլի և ֆուտզալի կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և երեք անդամից:
Կանանց ֆուտբոլի և ֆուտզալի կոմիտեի անդամ առաջադրվող անձանց համար հատուկ որակավորման և մասնագիտական պահանջներ չեն սահմանվում, սակայն տվյալ պաշտոնի (անդամության) թեկնածուների թիվը մեկից ավել լինելու դեպքում Գործադիր կոմիտեի կողմից որոշում կայացնելու ժամանակ հաշվի է առնվում տվյալ թեկնածուի աշխատանքային փորձը, մասնագիտական աստիճանը և որակավորումը՝ առավելություն տալով տվյալ թեկնածուին:

Հոդված 28. Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները

Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեն ՀՖՖ-ի և ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգերին համապատասխան սահմանում է տրանսֆերային տեղափոխությունների կանոնակարգերը և վերահսկում դրանց կատարումը, ինչպես նաև որոշում է ֆուտբոլիստների կարգավիճակը ՀՖՖ-ի տարբեր առաջնություններում: Գործադիր կոմիտեն կարող է հաստատել Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեի իրավասության շրջանակը կարգավորող հատուկ կանոնակարգեր:
Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեն նաև իրականացնում է հետևյալ գործողությունները.

- Ուսումնասիրում է Ֆուտբոլիստների կարգավիճակին և տրանսֆերային տեղափոխություններին առնչվող հարցերը և տրամադրում է եզրակացություններ ՀՖՖ համապատասխան մարմիններին,
- Ուսումնասիրում է Ֆուտբոլիստների գործակալների գործողությունների հետ կապված հարցերը և տրամադրում է եզրակացություններ ՀՖՖ համապատասխան մարմիններին,
- Ուսումնասիրում է Ֆուտբոլային միջնորդների գործողությունների հետ կապված հարցերը և տրամադրում է եզրակացություններ ՀՖՖ համապատասխան մարմիններին:

Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեն իր լիազորությունների շրջանակում, ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի, ինչպես նաև ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի այլ վերաբերելի կանոնակարգերի համաձայն կարող է կայացնել

որոշումներ և/կամ կիրառել կարգապահական տույժեր, որոնք վերջնական են և ենթակա են պարտադիր կատարման:

Հոդված 29. Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները

Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և երեք անդամից:
Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեի անդամ առաջադրվող անձանց համար հատուկ որակավորման և մասնագիտական պահանջներ չեն սահմանվում, սակայն տվյալ պաշտոնի (անդամության) թեկնածուների թիվը մեկից ավել լինելու դեպքում Գործադիր կոմիտեի կողմից որոշում կայացնելու ժամանակ հաշվի է առնվում տվյալ թեկնածուի աշխատանքային փորձը, մասնագիտական աստիճանը և որակավորումը՝ առավելություն տալով տվյալ թեկնածուին:

Հոդված 30. Մասսայական ֆուտբոլի կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները

Մասսայական ֆուտբոլի կոմիտեն աջակցում է Տեխնիկական և զարգացման կոմիտեին իր աշխատանքներում, մասնավորապես՝ իրականացնում է հետևյալ գործողությունները.

- Աջակցում և խորհրդատվություն է տրամադրում մասսայական ֆուտբոլի հարցերով,
- Կազմակերպում է տարբեր ծրագրեր և միջոցառումներ մասսայական ֆուտբոլի զարգացման վերաբերյալ:

Հոդված 31. Մասսայական ֆուտբոլի կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները

Մասսայական ֆուտբոլի կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և երեք անդամից:
Մասսայական ֆուտբոլի կոմիտեի անդամ առաջադրվող անձանց համար հատուկ որակավորման և մասնագիտական պահանջներ չեն սահմանվում, սակայն տվյալ պաշտոնի (անդամության) թեկնածուների թիվը մեկից ավել լինելու դեպքում Գործադիր կոմիտեի կողմից որոշում կայացնելու ժամանակ հաշվի է առնվում տվյալ թեկնածուի աշխատանքային փորձը, մասնագիտական աստիճանը և որակավորումը՝ առավելություն տալով տվյալ թեկնածուին:

Հոդված 32. Շահառուների կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները

Շահառուների կոմիտեն զբաղվում է ֆուտբոլի հետ կապված բոլոր հարցերով (մասնավորապես, խաղի կառուցվածք, ՀՖՖ-ի, ՀՖՖ-ի անդամների, շահառուների և ՀՖՖ-ի իրավազորության տարածքում գտնվող այլ ֆուտբոլային շահառու խմբերի միջև հարաբերություններ): Այն ընդունում է շահառուների և այլ շահառու խմբերի կողմից ներկայացված տեղեկությունները/փաստաթղթերը և ապահովում է Գործադիր կոմիտեի իրազեկվածությունը բոլոր համապատասխան հարցերի վերաբերյալ:

Հոդված 33. Շահառունրի կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները

Գործադիր կոմիտեն հաստատում է ՀՖՖ շահառուների ցանկը՝ համաձայն ՀՖՖ Կանոնադրության Հոդված 20-ի: Այնուամենայնիվ, Շահառուների կոմիտեում յուրաքանչյուր ոլորտ կարող է ներկայացված լինել միայն մեկ ներկայացուցչով:

Շահառուների կոմիտեի անդամ առաջադրվող անձանց համար հատուկ որակավորման և մասնագիտական պահանջներ չեն սահմանվում, սակայն տվյալ պաշտոնի (անդամության) թեկնածուների թիվը մեկից ավել լինելու դեպքում Գործադիր կոմիտեի կողմից որոշում կայացնելու ժամանակ հաշվի է առնվում տվյալ թեկնածուի աշխատանքային փորձը, մասնագիտական աստիճանը և որակավորումը՝ առավելություն տալով տվյալ թեկնածուին:

Հոդված 34. Բժշկական կոմիտեի գործունեության նպատակը, իրավունքները և պարտականությունները

Բժշկական կոմիտեն համակարգում է սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հարցերը, անհրաժեշտության դեպքում ՀՖՖ Գործադիր կոմիտեին է առաջարկում փոփոխություններ ոլորտի զարգացման նպատակով:

Բժշկական կոմիտեն ստեղծվում է ՀՖՖ բժշկական դեպարտամենտին աջակցման, ինչպես նաև մասնագիտական տարակարծման ժամանակ կանխարգելման, բուժման և վերականգնողական բժշկական մոտեցումների քննարկման և տարբեր բուժական մոտեցումների առաջարկման նպատակով:

Բժշկական կոմիտեն քննարկում և հավանություն է տալիս ՀՖՖ բժշկական դեպարտամենտի՝ սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հարցերի, ինչպես նաև սպորտային բժշկության մեջ նախատեսվող բարեփոխումների ծրագրերին:

Բժշկական կոմիտեն զբաղվում է ֆուտբոլում առկա բժշկական հարցերին առնչվող բոլոր խնդիրներով:

Բժշկական կոմիտեն քննարկում է ՀՖՖ բժշկական դեպարտամենտի ղեկավարի կողմից ներկայացվող այլ հարցեր և տալիս առաջարկություններ կամ արժանացնում հավանության:

Հաստատման ներկայացվող առաջարկությունները կամ հավանության արժանացած նախագծերը Բժշկական կոմիտեն ներկայացնում է ՀՖՖ Գործադիր կոմիտեին:

Հոդված 35. Բժշկական կոմիտեի կազմը և անդամների նկատմամբ սահմանվող պահանջները

Բժշկական կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և երեք անդամից:
Բժշկական խորհուրդը կազմված է նախագահից, փոխնախագահից, քարտուղարից և 18 անդամից:
Բժշկական կոմիտեն կազմվում է այնպիսի մասնագետներից, որոնց կրթությունը, մասնագիտական ունակությունները և հմտությունները թույլ կտան անհրաժեշտության դեպքում արագ կերպով ֆուտբոլիստներին ուղղված բուժական ծրագրերի հստակեցման որոշումներ ընդունել: Բժշկական կոմիտեի անդամ կարող են լինել նաև ՀՀ առողջապահության նախարարության խորհրդատուները:
Բժշկական կոմիտեի կազմն առաջարկում է ՀՖՖ բժշկական դեպարտամենտի ղեկավարը, իսկ հաստատում՝ ՀՖՖ գործադիր կոմիտեն:
Բժշկական կոմիտեի անդամն իր իրավունքները ու պարտականությունները կատարում է ինքնուրույն և հասարակական հիմունքներով:
Բժշկական կոմիտեի անդամին ներկայացվող պահանջներ են՝

1. Ավագ բուժաշխատողների դեպքում բարձրագույն բժշկական կրթություն և հետդիպլոմային բժշկական նեղ մասնագիտության առկայություն,
2. Այլ մասնագետների դեպքում (հոգեբան, կինիզիոլոգ, դեղագետ) բարձրագույն կրթություն և հետբուհական մագիստրոսական որակավորման առկայություն,
3. Առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

ԳԼՈՒԽ 4. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿՈՄԻՏԵՆԵՐ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ՆԻՍՏԵՐԸ

Հոդված 36. Ժամանակավոր կոմիտեների գործունեության նպատակը և կարգավիճակը

Ժամանակավոր կոմիտեներն ունեն խորհրդակցական կարգավիճակ և աջակցում են Գործադիր կոմիտեի և գլխավոր քարտուղարության լիազորությունների իրականացմանը:
Ցանկացած պահի, ըստ անհրաժեշտության՝ ՀՖՖ Գործադիր կոմիտեն կարող է ստեղծել հատուկ հարցերի քննարկման համար ժամանակավոր կոմիտեներ, որոնց գործունեության ժամկետը սահմանափակ է և սահմանվում է ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից: Ժամանակավոր կոմիտեներն անմիջականորեն հաշվետու են Գործադիր կոմիտեին:

Հոդված 37. Ժամանակավոր կոմիտեների կազմը և անդամները

Ժամանակավոր կոմիտեները կազմված են նախագահից, փոխնախագահից և անհրաժեշտ թվով անդամներից: Ժամանակավոր կոմիտեների անդամները, փոխնախագահը և նախագահը նշանակվում են Գործադիր Կոմիտեի կողմից: Ժամանակավոր կոմիտեների նախագահ, փոխնախագահ և անդամ կարող է լինել յուրաքանչյուր անձ:

Հոդված 38. Ժամանակավոր կոմիտեների ստեղծման և գործունեության իրավական կարգավորումը

Ժամանակավոր կոմիտեների նախագահները, փոխնախագահները և անդամները նշանակվում են կոմիտեի գործունեության համար ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից սահմանված ժամկետով, ՀՖՖ կանոնադրությամբ և սույն կանոնակարգով սահմանված ընթացակարգով, առանց արտաքին որևէ ազդեցության:

Ժամանակավոր կոմիտեների գործունեության իրականացումը կատարվում է սույն կանոնակարգի Գլուխ 2-ով նախատեսված՝ ՀՖՖ Մշտական կոմիտեների գործունեության նորմերին համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից տվյալ ժամանակավոր կոմիտեի ստեղծման որոշմամբ:

ԳԼՈՒԽ 5. ԱՆԿԱԽ ԿՈՄԻՏԵՆԵՐ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Անկախ կոմիտեներն իրենց գործառույթներն իրականացնում են ՀՖՖ Կանոնադրությանը և սույն կանոնակարգին համապատասխան: Անկախ կոմիտեներն են Աուդիտի և համապատասխանության կոմիտեն (վերստուգող մարմին), Ընտրական կոմիտեն և իրավական մարմինները: ՀՖՖ Իրավական մարմիններն են Կարգապահական և Էթիկայի կոմիտեն, Բողոքարկման կոմիտեն և Վեճերի լուծման պալատը:

Անկախ կոմիտեները և դրանց կազմում ընդգրկված անդամներն իրենց գործառույթները և լիազորություններն իրականացնելիս գործում են ամբողջովին անկախ և մշտապես ի շահ ՀՖՖ-ի՝ սույն Կանոնադրությանը և ՀՖՖ-ի այլ կանոնակարգերին համապատասխան:

Անկախ կոմիտեների նախագահներին, փոխնախագահներին և անդամներին ընտրում կամ ազատում է պաշտոնից ՀՖՖ Ժողովը:

Անկախ կոմիտեների նախագահները, փոխնախագահներն ու անդամները, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամները չեն կարող ՀՖՖ-ում, ՀՖՖ-ի որևէ մարմնի կազմում, որևէ Լիգայում կամ Ակումբում (ներառյալ դրանց հետ փոխկապակցված որևէ ընկերությունում/կազմակերպությունում) որևէ գործադիր պաշտոն զբաղեցնել (կամ իրենց առաջին պաշտոնավարման ժամկետին նախորդող չորս տարվա ընթացքում զբաղեցրած լինել), ինչպես նաև ստանալ (այդ թվում՝ իրենց առաջին պաշտոնավարման ժամկետին նախորդող չորս տարվա ընթացքում) որևէ ֆինանսական փոխհատուցում ՀՖՖ-ից, ՀՖՖ-ի որևէ մարմնից, որևէ Լիգայից կամ Ակումբից (ներառյալ՝ դրանց հետ փոխկապակցված որևէ ընկերությունից /կազմակերպությունից): «Ընտանիքի անդամ» է համարվում տվյալ անձի ամուսինը կամ նույն հարկի տակ ապրող կողակիցը, ծնողները, ծնողների ծնողները, հորեղբայրներն ու քեռիները, հորաքույրերն ու մորաքույրերը, զավակները (ներառյալ խորթ կամ որդեգրյալ երեխաները), թոռները, զավակի ամուսինը/կինը, ամուսնու/կնոջ ծնողները և բոլոր նրանք, ում հետ տվյալ անձն արյունակցական կամ այլ կապով պայմանավորված ընտանեկան հարաբերություններին նման հարաբերություններ ունի, ինչով պայմանավորված անձը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում այդ անձանց:

Մինչև ընտրվելը կամ վերընտրվելն Անկախ կոմիտեների (բացառությամբ Ընտրական կոմիտեի) նախագահները, փոխնախագահներն ու անդամները անցնում են համապատասխանության ստուգում Ընտրական կոմիտեի կողմից՝ ՀՖՖ Կանոնադրության, Ընտրական կանոնակարգի և սույն կանոնակարգի դրույթների համաձայն:

ԳԼՈՒԽ 5.1. ԱՈՒԴԻՏԻ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Հոդված 39. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի գործունեության նպատակը և կարգավիճակը

Աուդիտի և համապատասխանության կոմիտեն ՀՖՖ-ի վերստուգող մարմինն է, որն ապահովում է ֆինանսական հաշվապահության ամբողջականությունը և ճշգրտությունը, ստուգում է ֆինանսական հաշվետվությունները, ամփոփ ֆինանսական հաշվետվությունը և անկախ աուդիտորների զեկույցները:
Սույն գլխում սահմանված են ներքին աուդիտի և համապատասխանության սկզբունքները, բնույթը, շրջանակը, Աուդիտի և համապատասխանության կոմիտեի անդամների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կարգավորում է ներքին աուդիտի կազմակերպման և գործունեության հետ կապված հիմնական հարաբերությունները:

Հոդված 40. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի կազմը և անդամները, իրենց գործունեությունը կարգավորող նորմատիվ և իրավական բազան

Աուդիտի և համապատասխանության կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և երեք անդամներից: Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նախագահը, փոխնախագահը և անդամներն ընտրվում են Ժողովի կողմից չորս տարի ժամկետով և կարող են ազատվել իրենց լիազորությունների կատարումից միայն Ժողովի որոշմամբ: Նրանք ՀՖՖ-ի այլ մարմնի անդամ չեն կարող լինել, իսկ Նախագահը պետք է բավարարի ՀՖՖ Կանոնադրության 57-րդ հոդվածով սահմանված անկախության պահանջներին:
Աուդիտի և համապատասխանության կոմիտեի անդամները պարտավոր են իրենց պաշտոնավարման ընթացքում հետևել և առաջնորդվել սույն Կանոնակարգով, ՀՖՖ-ի Կանոնադրությունով, ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կանոնակարգերով, կարգադրություններով, որոշումներով, հրամաններով, կանոններով և այլ կիրառելի նորմատիվ իրավական ակտերով:
Եթե Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նախագահը, փոխնախագահը կամ որևէ անդամ պաշտոնավարման ընթացքում դադարեցնում է իր պաշտոնական գործունեությունը, ապա Գործադիր կոմիտեն նշանակում է փոխարինող, ով պաշտոնավարում է մինչև հաջորդ Ժողովի գումարումը, որի ժամանակ ընտրվում է նոր նախագահ, փոխնախագահ կամ անդամ:

Հոդված 41. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի աշխատանքների ծրագիրը

Հաշվի առնելով աուդիտի և համապատասխանության կոմիտեի առաջնային խնդիրները՝ կոմիտեի նախագահն անդամների և Գլխավոր քարտուղարի հետ համատեղ քննարկումներից հետո հաստատում են կոմիտեի աշխատանքների ծրագիրը:
Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար (վեց ամիս) սահմանվում են առաջնային խնդիրները և կատարվելիք աշխատանքները՝ հաշվի առնելով դրանց կարևորությունը և առաջնահերթությունը:

Հոդված 42. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի աշխատանքների կազմակերպման կարգը, նիստերի գումարման պարբերականությունը, նիստերի վերաբերյալ անդամներին ծանուցումը, օրակարգի ներկայացումը

Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նախագահը ՀՖՖ Գլխավոր քարտուղարի հետ համատեղ քննարկումից հետո սահմանում է նիստերի-գումարման օրերը, ապահովում է բոլոր խնդիրների կարգավորմանն ուղված գործողությունների կատարումը: Բոլոր դեպքերում Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նիստերը տեղի են ունենում կոմիտեի նախագահի որոշմամբ՝ աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, որպես կանոն տարեկան առնվազն 2 անգամ: Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նախագահը գլխավոր քարտուղարության հետ համատեղ 5 օր առաջ ծանուցում են բոլոր անդամներին, ելնելով անհրաժեշտությունից նաև երրորդ անձանց և/կամ մասնագիտական համապատասխան գիտելիքներ ունեցող մասնագետներին՝ նիստերի գումարման օրվա և ժամի մասին՝ ներկայացնելով օրակարգը:
Արտակարգ հարցերի դեպքերում (երբ անհրաժեշտ է նիստ անցկացնել, օրինակ, 3 օրից) Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նախագահը, խորհրդակցելով ՀՖՖ Գլխավոր քարտուղարի հետ, իրավունք ունի հրավիրելու Աուդիտի և համապատասխանության կոմիտեի արտակարգ նիստ՝ այդ մասին ծանուցելով բոլոր անդամներին՝ նիստի նշանակումից առնվազն 1 օր առաջ: Ծանուցումը համարվում է պատշաճ ուղարկված Աուդիտի և համապատախանության կոմիտեի անդամների էլեկտրոնային հասցեին և/կամ վերջինիս հետ համաձայնեցված այլ եղանակով ուղարկվելու դեպքում:
Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նիստերը անցկացվում են դռնփակ կարգով, սակայն, կոմիտեի նախագահի որոշմամբ, աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով՝ երրորդ անձինք կամ մասնագիտական համապատասխան գիտելիքներ ունեցող մասնագետները կարող են մասնակցել նիստերին:

Հոդված 43. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի գործունեության մեջ ՀՖՖ Իրավաբանական և ՄՌ բաժնի դերը

ՀՖՖ Իրավաբանական և ՄՌ բաժնի աշխատակիցը(ները).

- Իրականացնում է/են կոմիտեի նիստերի կազմակերպչական աշխատանքները և այլ վարչական գործառույթներ,
- Կոմիտեի նախագահի անունից ներկայացնում է/են ծանուցումներ նիստերին մասնակցության վերաբերյալ,
- Պատրաստում և ներկայացնում է/են նիստերի վերաբերյալ փաստաթղթեր (ներառյալ օրակարգի վերջնական տարբերակը) նիստերի մասնակիցներին,
- Վարում և պարբերաբար թարմացնում է/են կոմիտեների անդամների տվյալների շտեմարանը,
- Հանդես է/են գալիս որպես անդամների և ՀՖՖ-ի միջև կապող օղակ,
- Ապահովում է/են նիստերի արձանագրությունների վարումը,
- Ապահովում է/են ապրանքանյութական առարկաների գնումը և տրամադրումը,
- Կոմիտեի անխափան ու պատշաճ կարգով գործունեության իրականացման համար ապահովում է/են այլ անհրաժեշտ միջոցները:

Հոդված 44. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի գործունեության մեջ կոմիտեի նախագահի դերը

Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նախագահը.

- Իրավաբանական և ՄՌ բաժնի աշխատակիցների հետ միասին նախապատրաստում է կոմիտեի նիստերը (օրակարգը, ծանուցումները և այլն.),
- Նախագահում է կոմիտեի նիստերը,
- Նիստերի ընթացքում ղեկավարում է բոլոր քննարկումները և ապահովում է նիստերի բնականոն ընթացքը,
- Իրացնում է իր որոշիչ ձայնի իրավունքը՝ ձայների հավասարության դեպքում,
- Հաստատում է կոմիտեի գործողությունների ցանկը,
- Մամլո ասուլիսների ժամանակ հանդես է գալիս կոմիտեի անունից,
- Անմիջապես տեղեկացնում է կոմիտեի անդամներին ցանկացած հատուկ հարցերի վերաբերյալ,

Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նախագահը համակարգում է նիստերի ընթացքում հանդես եկողների ելույթները, անհրաժեշտության դեպքում սահմանափակում է ելույթով հանդես եկողների ժամանակը կամ ձեռնարկում այլ միջոցներ նիստերի բնականոն ընթացքն ապահովելու նպատակով:

Հոդված 45. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նիստերի նախագահողը

Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ փոխնախագահը, նախագահում է նիստերը: Այն բոլոր դեպքերում, երբ

նախագահը և փոխնախագահը ներկա չեն գտնվում նիստերին՝ Աուդիտի և համապատասխանության կոմիտեի անդամները պետք է ձայների պարզ մեծամասնությամբ ընտրեն այդ նիստը նախագահողին:

Հոդված 46. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նիստերի օրակարգը

Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նախագահը ՀՖՖ Իրավաբանական և ՄՌ բաժնի հետ միասին նախապատրաստում է կոմիտեի նիստերի օրակարգի նախագիծը: Նիստերի օրակարգի մեջ պետք է ներառվեն նվազագույնը հետևյալ կետերը.

- Նախագահի ողջույնի խոսքը,
- Անդրադարձ և հաշվետվության ներկայացում նախորդ նիստի արդյունքներով ձևավորված գործողությունների ցանկի վերաբերյալ,
- Հաջորդ (կայանալիք) նիստի ընթացքում քննարկվող հարցերը,
- Հաջորդ (կայանալիք) նիստի օրը, վայրը և ժամը,
- Այլ անհրաժեշտ հարցեր:

Նիստերի օրակարգի նախագիծը՝ նիստին մասնակցության հրավերի հետ միասին նիստերի կայացման օրվանից ոչ ուշ քան 5 աշխատանքային օր առաջ ուղարկվում է (գրավոր կամ էլեկտրոնային եղանակներով) վերոնշյալ կոմիտեների անդամներին:

Աուդիտի և համապատասխանության կոմիտեի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի նիստերի օրակարգում ներառելու նպատակով ներկայացնել կոմիտեի գործառույթների հետ առնչվող առաջարկ, հարց և/կամ խնդիր: Նման առաջարկ(ներ), հարց(եր) և/կամ խնդիր(ներ) ներկայացնող անդամը պարտավոր է այն գրավոր (կամ էլեկտրոնային եղանակով) ներկայացնել կոմիտենի նախագահին հաջորդ (կայանալիք) նիստի օրվանից ոչ ուշ քան 3 աշխատանքային օր առաջ: Նման առաջարկ(ներ), հարց(եր) և/կամ խնդիր(ներ) ներկայացնող անդամը պարտավոր է հստակ ձևակերպել այդ առաջարկ(ներ)ը, հարց(եր)ը և/կամ խնդիր(ներ)ը, համապատասխան հիմնավորումների հետ միասին:

Նիստի կայացման օրվանից ոչ ուշ քան 1 աշխատանքային օր առաջ Գլխավոր քարտուղարը կոմիտեի նախագահի հետ համաձայնեցված օրակարգի վերջնական տարբերակը, հիմնավորող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է կոմիտեի անդամներին և նիստին մասնակցող կամ հրավիրված երրորդ անձանց:

Սահմանված ժամկետում մասնակիցներին ներկայացված վերջնական օրակարգում հետագայում չեն կարող կատարվել փոփոխություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ կոմիտենի նախագահի որոշմամբ օրակարգում կատարվող փոփոխություն(ներ)ը ճանաչվում է(են) հրատապ և անհրաժեշտ:

Հոդված 47. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի անդամների ձայնի իրավունքը, քվորումը և քվեարկության կարգը

Աուդիտի և համապատասխանության կոմիտեի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք և այն իրացնում է անձամբ: Քննարկվող հարցերի վերաբերյալ քվեարկությունն

իրականացվում է բաց քվեարկությամբ, եթե կոմիտեի Նախագահի կողմից այլ ձևով քվեարկություն կազմակերպելու վերաբերյալ որոշում չի կայացվել:
Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նիստերը իրավազոր են (քվորումն ապահովված է) միայն այն դեպքում, եթե քվեարկելու իրավունք ունեցող անդամների մեծամասնությունը (ավելի քան 50%-ը) ներկա է նիստին: Եթե նիստի սկզբում քվորում չկա, ապա հաջորդ օրը՝ նույն ժամին և նույն վայրում, գումարվում է երկրորդ նիստը՝ նույն օրակարգով: Հաջորդ օրը կայանալիք նիստի սկզբում քվորում չլինելու դեպքում, տվյալ կոմիտեի նախագահը իրավունք ունի որոշում կայացնել նիստը սկսել ներկա անդամներով կամ հետաձգել նիստը և նշանակել մեկ այլ օր:
Աուդիտի և համապատասխանության կոմիտեի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումները ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշիչ է կոմիտեի նախագահի ձայնը: Ներկայացուցչի կամ նամակի միջոցով քվեարկությունն արգելվում է:
Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նախագահի որոշմամբ յուրաքանչյուր դեպքում նիստերը կարող են անցակցվել նաև հեռավար, հիբրիդային և/կամ գրավոր կարգով՝ էլեկտրոնային նամակագրության միջոցով:
Ցանկացած պարագայում պետք է ապահովի անդամների և նիստին մասնակցելու իրավունք ունեցող այլ անձանց՝ նիստին մասնակցելու համար պաշտաճ հնարավորություն և միջոցառումներ:

Հոդված 48. Աուդիտի և համապատասխանության կոմիտերի նիստի արձանագրությունները

Աուդիտի և համապատասխանության կոմիտեի բոլոր նիստերը գրավոր արձանագրվում են ՀՖՖ Իրավաբանական և ՄՌ բաժնի կողմից և պատշաճ կարգով (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ էլեկտրոնային փոստով) ներկայացվում են անդամների հաստատմանը՝ նիստի օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում: Արձանագրությունները պետք է ներառեն հետևյալ նվազագույն տեղեկատվությունը

- նիստի օրը և վայրը, նիստի անցակցման տեսակը (հեռավար, հիբրիդային և/կամ գրավոր),
- կոմիտեի նիստին ներկա և բացակա անդամների կազմը,
- օրակարգը,
- քննարկումները,
- նիստերի ընթացքում մասնակիցների կողմից կատարված մեկնաբանությունները, որոնք բացահայտ անհրաժեշտության սկզբունքով կամ մասնակիցների պահանջով ենթակա են ներառման,
- կայացված որոշումների և/կամ կատարման համար անհրաժեշտ միջոցառումների նկարագիրը,
- անհրաժեշտության դեպքում՝ Գործողությունների/պարտականությունների կատարման համար նշանակված և պատասխանատու անձանց ցանկը, ինչպես նաև Գործողությունների/պարտականությունների կատարման համար հստակ վերջնաժամկետները,

Աուդիտի և համապատասխանության կոմիտեի անդամները պետք է հաստատեն այդ արձանագրությունները՝ ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում և

վերադարձնեն ՀՖՖ Իրավաբանական և ՄՌ բաժին: Արձանագրությունները համարվում են հաստատված այն բոլոր դեպքերում, երբ անդամներն այն ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՖՖ Իրավաբանական և ՄՌ բաժին չեն ներկայացնում դրա վերաբերյալ գրավոր առարկություններ: Եթե վերոնշյալ ժամկետում ՀՖՖ Իրավաբանական և ՄՌ բաժնի կողմից ստացվում են առարկություններ արձանագրության վերաբերյալ, ապա տվյալ արձանագրությունը քննարկման նպատակով ներառվում է կոմիտեի հաջորդ նիստի օրակարգում: Բոլոր դեպքերում կոմիտեի նիստերի արձանագրություններով սահմանված որոշումները ուժի մեջ են մտնում նիստի ավարտից անմիջապես հետո: Կոմիտեի անդամների կողմից արձանագրությունների հաստատումից հետո, դրանք ստորագրվում են կոմիտեի նախագահի կողմից:

Հոդված 49. Աուդիտի և համապատասխանության կոմիտեի կողմից աշխատանքային խմբերի ձևավորումը

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով՝ Աուդիտի և համապատասխանության կոմիտեի կողմից կարող են ձևավորվել աշխատանքային խմբեր՝ հատուկ աշխատանքների իրականացման կամ հատուկ հարցերի ուսումնասիրության կատարման նպատակով (օրինակ՝ ֆուտբոլային գործունեության տարբեր կողմերում հանդես եկող և տարբեր անձանց շահերը ներկայացնող անձանց համար սոցիալական հարթակի ստեղծում): Աշխատանքային խմբերում կարող են ներգրավվել անձինք, որոնք չեն հանդիսանում կոմիտեի անդամներ:

ԳԼՈՒԽ 5.2. ԸՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հոդված 50. Ընտրական կոմիտե

Ընտրական կոմիտեն, ՀՖՖ-ի Ընտրական կանոնակարգին համապատասխան, ընտրական գործընթացների կազմակերպման և վերահսկման համար պատասխանատու մարմինն է: Ընտրական կոմիտեի որոշումների դեմ բողոքները քննվում են Բողոքարկման կոմիտեի կողմից:

Ընտրական կոմիտեի գործունեության շրջանակը, հիմնական սկզբունքները, կազմը, պարտականություններն ու նիստերի անցկացման կարգը կարգավորվում է ՀՖՖ Ընտրական կանոնակարգով:

ԳԼՈՒԽ 6. ԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Հոդված 51. Ընդհանուր դրույթներ

1. ՀՖՖ Կառուցվածքային ստորաբաժանումներ հանդիսացող իրավական մարմիններն են.
   ա) Կարգապահական և էթիկայի կոմիտեն,
   բ) Բողոքարկման կոմիտեն,
   գ) Վեճերի լուծման պալատը:
2. Իրավական մարմինները կազմված են նախագահից, փոխնախագահից և որոշակի թվով անդամներից:
3. Իրավական մարմինները պետք է ձևավորվեն այնպես, որ անդամները միասնաբար ունենան իրենց խնդիրները պատշաճ կատարելու համար անհրաժեշտ գիտելիք, կարողություններ և մասնագիտական փորձ: Իրավական մարմինների նախագահները պետք է իրավաբանական գործունեության համար անհրաժեշտ որակավորում ունենան:
4. Իրավական մարմինների բոլոր անդամների պաշտոնավարման ժամկետը չորս տարի է: Անդամները կարող են վերընտրվել կամ ցանկացած պահի ազատվել իրենց լիազորությունների իրականացումից՝ միայն Ժողովի կողմից:
5. Իրավական մարմինների նախագահները, փոխնախագահները և մյուս անդամներն ընտրվում են Ժողովի կողմից՝ Գործադիր կոմիտեի առաջարկությամբ, և չեն կարող ՀՖՖ-ի որևէ այլ մարմնի անդամ լինել:
6. Եթե որևէ իրավական մարմնի նախագահ, փոխնախագահ կամ անդամ պաշտոնավարման ժամկետի ընթացքում դադարեցնում է իր պաշտոնական գործունեությունը, ապա Գործադիր կոմիտեն նշանակում է մինչև հաջորդ Ժողովը պաշտոնավարող փոխարինող: Հաջորդ Ժողովը նշանակում է տվյալ իրավական մարմնի նոր անդամին՝ մնացյալ ժամկետով պաշտոնավարելու համար:
7. Իրավական (կարգապահական մարմինների) մարմինների գործառույթներն ու լիազորությունները սահմանվում են ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգով:
8. Սույն կետով սահմանված դրույթները կիրառելի չեն Վեճերի լուծման պալատի նկատմամբ, որը գործում է իր կանոնակարգի համաձայն:

ԳԼՈՒԽ 7. ՀՖՖ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ, ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 52. Մշտական, ժամանակավոր և անկախ կոմիտեների անդամների իրավունքների և պարտականությունների իրավական կարգավորումը

ՀՖՖ Գլխավոր քարտուղարը կամ նրա կողմից լիազորված անձը մշտական, ժամանակավոր և անկախ կոմիտեների անդամների կողմից պաշտոնը ստանձնելուց հետո, մանրամասն ծանոթացնում և ներկայացնում է կոմիտեների գործունեության նպատակներին և խնդիրներին, ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կիրառելի կանոնակարգերին, ՀՖՖ Կանոնադրությանը, անդամների իրավունքներին և պարտականություններին, ՆԿԿ-ին, ՀՖՖ այլ կիրառելի ներքին իրավական ակտերին (առկայության դեպքում)։ Վերոնշյալ բոլոր փաստաթղթերն ուղարկվում են անդամի էլեկտրոնային հասցեին, ինչը համարվում է պատշաճ ծանուցում։

Հոդված 53. Մշտական, ժամանակավոր և անկախ կոմիտեների անդամների գործունեության հիմնական սկզբունքները

Կոմիտեների անդամները պարտավորվում են իրենց գործունեության ընթացքում առաջնորդվել և հարգել՝

- Մարդու իրավունքների գերակայության սկզբունքը,
- Խտրականության բացառման, իրավահավասարության և ռասիզմի դեմ պայքարի սկզբունքը,
- քաղաքական և կրոնական հարցերում չեզոքության սկզբունքը,
- Միասնության և հավատարմության սկզբունքը,
- Իրավունքի գերակայության և օրինականության սկզբունքը,
- Սոցիալական արդարության և սոցիալական ազատության սկզբունքը,
- Ազնվության և հավասարության սկզբունքը։

Հոդված 54. Մշտական, ժամանակավոր և անկախ կոմիտեների անդամների և ՀՖՖ-ի հիմնական կազմակերպչական, կարգապահության և էթիկայի հետ կապված պարտականությունները

Կոմիտեների անդամները պարտավոր են՝

- ակտիվ մասնակցություն ունենալ Կոմիտեների գործունեությանը,

- մասնակցել և ներկա գտնվել նիստերին (բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ կոմիտեի նախագահի կողմից բացակայությունը ճանաչվում է հարգելի),
- պատշաճ կերպով կատարել տվյալ կոմիտեի Գործողությունների ծրագիրը՝ այն բոլոր դեպքերում, երբ նիստերի արդյունքում որոշակի պարտականություններ են սահմանվել անդամի(ների) համար,
- պատշաճ կերպով, առանց կողմնակի ազդեցության, օբյեկտիվորեն (ներքին համոզմամբ և փաստերի հիման վրա ձևավորված կարծիք), առաջնորդվելով մասնագիտական գիտելիքների և փորձի հիման վրա՝ կայացնել որոշումներ և/կամ ներկայացնել կարծիք/դիրքորոշում,
- առաջնորդվել սույն Կանոնակարգով, ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կիրառելի կանոնակարգերով, ՀՖՖ Կանոնադրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով,
- ենթարկվել տվյալ կոմիտեի նախագահի հրահանգներին, կատարել հանձնարարությունները և հանձնարարականները,
- խնամքով վերաբերվել պաշտոնական պարտականությունների, ինչպես նաև հանձնարարված աշխատանքների կատարման նպատակով հատկացված տեխնիկային, ֆինանսական և մյուս նյութական միջոցներին, դրանք օգտագործել ըստ նշանակության,
- ՀՖՖ-ում պահպանել էլեկտրական սարքավորումների օգտագործման և հակահրդեհային անվտանգության կանոնների պահանջները,
- պաշտոնական լիազորությունները իրականացնելիս՝ չխաթարել այլ անձանց բնականոն գործունեությունը,
- խստորեն պահպանել ՀՖՖ ներքին իրավական ակտերով և այլ փաստաթղթերով սահմանված, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գաղտնիքները և տեղեկատվությունը՝ ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը,
- հարգել մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները,
- ցուցաբերել զսպվածություն, քաղաքակիրթ, վայելուչ և հարգալից վերաբերմունք բոլորի նկատմամբ,
- ձեռնպահ մնալ ֆինանսական, գործնական, անձնական այնպիսի կապերի հաստատումից, որոնք կարող են խախտել նրա անաչառությունը, խոչընդոտել պաշտոնական պարտականությունների պատշաճ կատարմանը,
- ՀՀ օրենսդրությամբ, ՆԿԿ-ով, ՀՖՖ կանոնադրությամբ և ՀՖՖ ներքին իրավական ակտերով նախատեսված կարգով իր լիազորություններն իրականացնելիս՝ զերծ մնալ (հրաժարվել) որևէ մեկից նվերներ, գումարներ, ծառայություններ ստանալուց կամ դրանք հետագայում ստանալու համար համաձայնություն տալուց,
- պահպանել չեզոքություն քաղաքական և կրոնական հարցերում,
- ենթարկվել ՀՖՖ Նախագահի և Գլխավոր քարտուղարի հրամաններին, կարգադրություններին, հրահանգներին ու ցուցումներին,
- կատարել տվյալ կոմիտեի նախագահի կողմից տրվող՝ տվյալ կոմիտեի գործունեությանն առնչվող հրահանգներն ու ցուցումները,

- պահպանել գույքի և փաստաթղթերի պահպանման՝ ՀՖՖ կողմից սահմանված կարգը,
- ՀՖՖ տարբեր ստորաբաժանումների աշխատողների հետ հարաբերություններում պահպանել ենթակարգությունը և բարոյական ու աշխատանքային նորմերով սահմանված էթիկայի կանոնները,
- հարգել մարդու արժանապատվությունը՝ անկախ նրա ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից,
- ՀՖՖ ներկայանալ անձնական հիգիենայի կանոնների պահպանմամբ,

Կոմիտեների անդամներին կարող են ներկայացվել նաև կարգապահության պահպանմանն առնչվող ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնակարգով, ՆԿԿ-ով, ինչպես նաև ՀՖՖ այլ իրավական ակտերով նախատեսված սահմանափակումներ և պարտականություններ:

Կոմիտեի անդամներին ներքին կարգապահության պահպանման մասով արգելվում է՝

- կոմիտեների աշխատանքների իրականացման և նիստերի ժամերին, ինչպես նաև ՀՖՖ-ի տարածքում գտնվելու և պաշտոնական պարտականությունների իրականացման ժամանակ օգտագործել ոգելից խմիչքներ, կամ ներկայանալ ոգելից խմիչքներ օգտագործած վիճակում,
- ոչ աշխատանքային նպատակներով օգտագործել աշխատանքային նպատակներով հատկացված տեխնիկան, ՀՖՖ գույքը, ֆինանսական և մյուս նյութական միջոցները,
- պարտականությունների ընթացքում հայտնի դարձած ցանկացած տեղեկատվություն հրապարակելը, փոխանցելը կամ փոխանակելը կամ որևէ այլ կերպ օգտագործելը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,
- առանց համապատասխան թույլտվության ՀՖՖ-ում թռուցիկներ, հրատարակություններ և հանրագրեր տարածելն ու դրանք փակցնելը,
- կողմնակի անձանց ՀՖՖ բերելը,
- առանց թույլտվության ՀՖՖ-ից գործիքներ, տեխնիկա, սպառողական ապրանքներ և նյութական միջոցներ դուրս բերելը,
- առանց պատասխանատու անձի թույլտվության ՀՖՖ սարքավորումները պաշտոնական պարտականությունների իրականացման հետ չկապված նպատակներով օգտագործելը,
- համակարգիչները, հեռախոսային ու ինտերնետային կապը ոչ աշխատանքային նպատակներով օգտագործելը,
- վաճառքի համար նախատեսված ապրանքներ և առարկաներ ՀՖՖ բերելը,
- ՀՖՖ-ում և ՀՖՖ-ն ներկայացնելիս այնպիսի հագուստ կրելը, որը ներկայացուցչական չի լինի կամ կխախտի գործարար սովորույթները,
- Կոմիտեների անդամների կողմից հրապարակված գրքերում, աշխատանքներում և այլ նյութերում, ինչպես նաև ՀՖՖ-ից դուրս կատարվող այլ աշխատանքներում ՀՖՖ-ին հղումներ կատարելը՝ առանց ՀՖՖ Նախագահի կամ Գլխավոր քարտուղարի թույլտվության,
- պաշտոնական դիրքի հետ կապված որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի վճարի կամ հովանավորության պահանջ ներկայացնելը կամ նրանց կողմից նման

առաջարկ ընդունելը (նման առաջարկ ստանալու դեպքում, անմիջապես տեղեկացնել ՀՖՖ նախագահին և ՀՖՖ գլխավոր քարտուղարին),

- որևէ այլ գործողություն կատարելը, որը բացասաբար կանդրադառնա ՀՖՖ հեղինակության և գործունեության արդյունավետության վրա, այդ թվում՝ պարտավոր են սոցիալական ցանցերում, իրենց պատկանող պաշտոնական (անհատական) կայքէջերում և համանման այլ սոցիալական հարթակներում, ինչպես նաև տարբեր հրապարակումների մեկնաբանություններում՝
  - դրսևորել առավել զսպվածություն,
  - պահպանել ՖԻՖԱ, ՈՒԵՖԱ, ինչպես նաև ՀՖՖ կանոնակարգերի և կանոնադրությունների, ի թիվս այլնի՝ քաղաքական չեզոքության, խտրականության ցանկացած դրսևորման արգելքի վերաբերյալ հիմնարար և ելակետային պահանջները,
  - զերծ մնալ պաշտոնեական (աշխատանքային) գործունեության վերաբերյալ այնպիսի մեկնաբանություններ և/կամ գործողություններ կատարելուց, որոնք ուղղակի կամ անուղղակի կարող են ազդել ՀՖՖ հեղինակության վրա:

ԳԼՈՒԽ 8. ՀՖՖ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ ԵՎ ՆԿԿ-ՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՀԱՆՋՆԵՐԻ, ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 55. ՀՖՖ կոմիտեների անդամների սույն կանոնակարգով և ՆԿԿ-ով նախատեսված պարտավորությունների, պահանջների, կարգապահության և էթիկայի կանոնների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունը

Գործադիր Կոմիտեն ՀՖՖ կոմիտեների նախագահների կողմից ներկայացված առաջարկի հիման վրա կարող է նախաձեռնել ՀՖՖ կոմիտեների անդամների անդամության ժամանակավորապես կասեցման կամ հեռացման (պաշտոնից ազատման) հարցը: Գործադիր Կոմիտեն ՀՖՖ կոմիտեների նախագահների անդամության ժամանակավորապես կասեցման կամ հեռացման (պաշտոնից ազատման) հարցը նախաձեռնում է ինքնուրույն՝ համապատասխան որոշման հիման վրա: ՀՖՖ կոմիտեների նախագահները ելնելով խախտման դեպքի առանձնահատկություններից, հիմք ընդունելով տվյալ անդամի նախկինում իրականացրած գործառույթների կատարողականը և անձնական բնութագիրը, կարող է նախաձեռնել ՀՖՖ կոմիտեների անդամների անդամության ժամանակավորապես կասեցման կամ հեռացման (պաշտոնից ազատման) հարցը՝ մինչև հաջորդ Ժողովի անցկացումը:

ՀՖՖ կոմիտեների անդամին անդամությունից հեռացնել կարող է Ժողովը: Անդամի հեռացման հարցը Ժողովի օրակարգում ներառվում է Գործադիր կոմիտեի առաջարկությամբ: Գործադիր կոմիտեի ցանկացած անդամ կարող է Գործադիր կոմիտեի կամ Ժողովի օրակարգում ներառել որևէ անդամին անդամությունից հեռացնելու մասին միջնորդություն ներկայացնելու առաջարկ:

Անդամների անդամության ժամանակավորապես կասեցման կամ հեռացման (պաշտոնից ազատման) հարցի մասին միջնորդությունը պետք է պատճառաբանվի: Այն ուղարկվում է Գործադիր կոմիտեի անդամներին և/կամ ՀՖՖ-ի Անդամներին՝ օրակարգին կից:

ՀՖՖ կոմիտեների համապատասխան հեռացվող անդամն ունի մինչև քվեարկությունը հեռացման հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը գրավոր կամ բանավոր արտահայտելու իրավունք:

Անդամությունից հեռացնելու մասին միջնորդության վերաբերյալ որոշումը կայացվում է փակ, գաղտնի քվեարկությամբ՝ Ժողովին ներկա Պատվիրակների վավեր ձայների երկու երրորդ մեծամասնությամբ:

ՀՖՖ հեռացված անդամը (ժամանակավորապես կամ մեկընդմիշտ) անմիջապես ազատվում է իր գործառույթներից:

ԳԼՈՒԽ 9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 56. Այն հարցերի կարգավորումը, որոնք կարգավորված չեն Կանոնակարգով

ՀՖՖ Կոմիտեների գործունեության կարգավորման առարկա հանդիսացող հարաբերությունները և հարցերը, որոնք չեն կարգավորվում սույն Կանոնակարգով, կարգավորվում են ՀՖՖ Նախագահի որոշումներով և/կամ հրամաններով՝ հիմք ընդունելով ՀՖՖ կանոնադրությունը և կանոնակարգերը, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կանոնակարգերը:

Հոդված 57. Սույն կանոնակարգի ընդունումը և ուժի մեջ մտնելը

1. Սույն կանոնակարգը հաստատվել է ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից 28.07.2023թ.:
2. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում 28.07.2023թ.: